ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻՆ՝ ԵՐԱԺԻՇՏ ԵՒ ԵՐԳԱՀԱՆ

Գայիանէ Մխիթարեան

Մխիթարեան միաբանութիւնը՝ իբրեւ հոգեւոր, ուսումնակրթական, գիտական եւ մշակութային կազմակերպութիւն, անգնահատելի դեր է կատարել հայագիտութեան զարգացման եւ հայ ինքնութեան պահպանման պատմական գործընթացներում: «Ոչ մէկ հայկական հաստատութիւն այնքան խորունկ ու տեւական ազդեցութիւն ունեցած է Հայոց վրայ, արեւմտեան ոգիին, ճաշակին ու ազնիւ բարքերուն մեր տարածման տեսակէտով, որքան Մխիթարի տունը»,- գրում է Արշակ Չօպանեանը[1]*:*

Իրեն բնորոշ կորովով ու լայնախոհութեամբ Սեբաստացին, ղեկավարելով Միաբանութիւնը, մեծապէս նպաստում է հայրենի գիտութիւնը զարգացնելու եւ միջազգային մայրուղիներ դուրս բերելու դժուարին ու պատուաւոր գործին, որի յաջողութեան գրաւականը անխոնջ աշխատասիրութիւնն էր, անսպառ մտաւոր ներուժը: «Օտարները Հայոց կղզի կը կոչեն,- գրում է Սեբաստացին Ս. Ղազարի առիթով.- Հոն ամէն ինչ հայկական է եւ հայ անունին համար: Աղօթքի հետ՝ աշխատանք, առաքինութեան հետ՝ հայրենասիրութիւն, հաւատքի հետ՝ գաղափարական սեւեռակէտ, եւ միշտ Հայաստան, ամէն ինչ Հայաստանի համար, հայ ժողովրդի համար...»[2]*: Պատահական չէ, որ հայ ժողովուրդը, ի դէմս Մխիթար Սեբաստացու, Մխիթարեան միաբանութեան փորձում է տեսնել ինքն իրեն, նրա երախտիքով ծանր ու թեթեւ անել իր գիտական միտքը, մշակութային արժէքները՝ համաշխարհային հեւքին համեմատ:*

Հոգեւոր ուսուցչի, խոհուն գիտնականի եւ հետազօտողի՝ իր արդիւնաւէտութեամբ մշտապէս շարունակուող նրա գործունէութիւնը հաստատւում է ծանրակշիռ մի ժառանգութեամբ, որին անհնար է չդիմել հայագիտութեանը, բանասիրութեանն առնչուող ամենատարբեր հարցերի անդրադառնալիս: Երբ ծանօթանում ենք նրա գործունէութեանը, ակամայ զարմանք է համակում նրա գործի ու նպատակների սահմանների ուրուագիծը: Իրօք, ինչպիսի աղնուութեամբ ու դիւանագիտական նրբութեամբ է նա ծառայել մարդասիրական գաղափարներին ու ձգտել խաղաղութեան ու ժողովրդասիրութեան առաքելը դառնալ իր հարազատ ժողովրդի: Լինելով կաթողիկէ՝ աստուածաբանական եւ հայրախօսական բացառիկ հմտութեամբ եւ խորիմաց փաստարկներով մշտապէս պաշտպանել է Հայոց եկեղեցու դաւանանքը: Եթէ յաւելենք, որ Մխիթար Սեբաստացին նաեւ երաժիշտ է ու երգահան, ապա պարզ կը դառնայ, որ նրա ստեղծագործական հաւատամքը որքան ժամանակի արտայայտութիւն էր, այնքան էլ խոր արմատներ ունէր՝ կապուած հայկական միջնադարեան երաժշտարուեստի աւանդոյթներին: «Դիւրութեամբ կը շինէր տաղեր, ոտանաւորներ, եւ անոնց կը յարմարեցնէր արեւելեան տխրաւոյշ եղանակներ, որոնցմէ մի քանին մինչեւ այսօր կը պահուին աւանդաբար մեր մէջ»[3]*: Տակաւին պատանի հասակում գրած «Աղաչեմք զքեզ, Աստուածածին» երգը յարմարուած է հայոց այբուբենի տառերին, եւ առաջին վեց տների վերջին տողերի սկզբնատառերը կազմում են Մխիթար անունը: «Աստուածածնայ տօներուն կ'երգուի այն մեր մէջ»,- գրում է Հ. Յովհ. Վ. Թորոսեանը*[4]*:*

Թուերգի ու եկեղեցական հոգեւոր պաշտօներգութեան մէջ մանկապատանեկան հասակից հմտացած, աւանդապահ երգիչ-հոգեւորական, երաժիշտ-տեսաբան, իմաստուն ուսուցիչ, շնորհալի շարականագիր, տաղասաց ու երգահան. այսպէս է բնութագրւում Մ. Սեբաստացին Հ. Ստ. Ագոնցի, Հ. Յովհ. Թորոսեանի վարքագրութիւններում եւ Հ. Ղ. Տայեանի երկում[5]*: Որպէս երաժիշտ-տեսաբան՝ Մ. Սեբաստացին զբաղուել է հայոց ձայնեղանակների ու խազերի համակարգի հարցերով: Հետաքրքրիրն այն է, որ «ան չէ յաճախած երգեցողութեան կանոնաւոր ոչ մէկ պաշտօնական կամ յատուկ դպրոց, եւ ոչ ալ Երաժշտանոցի սեմէ ներս կոխած է: Ան ուրեմն արբած է Հոգւոյն Սրբոյ Վարժոցէն՝ ուրիշ գիտութիւններու հետ հրեշտակային այդ նուրբ ու երկնային արուեստը եւս: Այսպէս Մխիթար կը դառնայ բառին բովանդակ իմաստով շարականագէտ, շարականագիր եւ հոգերգու տաղասաց»,- գրում են նրա վարքագիրները*[6]*:*

Մ. Սեբաստացու գեղագիտական հայեացքների ու երաժշտութեան տեսական գիտելիքների վերաբերեալ նկատառումներն ամփոփուած են «Մաթեմաթիքայի» ձեռագիր աշխատութեան մէջ՝ երաժշտութեանը նուիրուած երկու գլուխներում: Առաջինում գեղագիտական, հայկական ութձայնի տեսութեան, խազագիտութեան հարցերին նուիրուած հատուածներ են, իսկ երկրորդը՝ «Ցաղագս երաժշտութեան ըստ որում են առ լաթինսն»[7]*: Անդրադառնալով ԺԷ.-ԺԸ. դարերում վերանորոգութեան շարժմանը նաեւ հայ հոգեւոր երգարուեստում՝ անուանի երաժշտագէտ Ն. Թահմիզեանը բարձր է գնահատել Մ. Սեբաստացու գործունէութիւնը, միաժամանակ նշել, որ ամենայն հաւանականութեամբ Աբբահայրն իր այդ աշխատանքը կատարել է երիտասարդ տարիքում Կ. Պոլսում՝ օգտուելով խաչատուր Էրզրումեցու ցուցումներից, նրա բարեհաճ վերաբերմունքից ու դեռեւս անտիպ երկասիրութիւններից*[8]*:*

Ստեղծագործող անհատը միշտ էլ թաքուն սուրբ զգացմունքներ է փայփայում: Դեռեւս պատանի տարիքից երգի սիրահար, մեղեդիների յուզականութեանը ենթակայ Մ. Սեբաստացու արուեստում իբրեւ ստեղծագործական ելակէտ երաժշտութեան մէջ ակնառու է բանաստեղծութեան շնորհալիական ընկալումը: Նա քաջատեղեակ էր հայ միջնադարեան մանագիտացուած երաժշտարուեստի պատմութեանը եւ իր շարականներն էլ ստեղծել է հէնց նախնեաց շարականագրութեան աւանդոյթների ստեղծագործական իւրացման սկզբունքներով: «Մխիթար Աբբահայր մտադիր ըլլալով յատուկ շքեղութիւն մը տալ նաեւ ժամերգութեան աւուր պատշաճի շարականներուն՝ կը զգեցնէ անոնց վայելչագեղ ու վսեմ եղանակներ, առնելով հայրենի շարականներու ամէնէն ընտիր եւ գունագեղ տեսակներէն: Դիտելի է, որ ան չէ ուզած անոնց համար նոր եղանակ շարադրել, եւ հետեւած է կանոնական Ութ Ձայնի դրութեան: Այս պարագան իր մէջ կը դիտէ փարող մը եւ նախանձախնդիր՝ մեր Նախ-

1 Լէօ, *Երկերի ժողովածու*, հտ. V, Երեւան, 1986, էջ 360:

2 Նոյն տեղում, էջ 361:

3 Հ. Յովհ. Թորոսեան, *Վարք Մխիթարայ*, Վենետիկ, 1932, էջ 339:

4 Հ. Յովհ. Թորոսեան, նշ. աշխ., էջ 339:

5 Հ. Ստ. Ագոնց, *Պատմութիւն կենաց եւ վարուց Տեառն Մխիթարայ*, Վենետիկ, 1810. Հ. Յովհ. Թորոսեան, *Վարք Մխիթարայ*, Վենետիկ, 1932. Հ. Ղ. Տայեան, *Մխիթար Աբբահայր երաժիշտ*, Վենետիկ, 1954:

6 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 8:

7 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 17:

8 Ն. Թահմիզեան, *Մ. Սեբաստացին եւ վերանորոգութեան շարժումը հայ հոգեւոր երգարուեստում*,- «Բազմավէպ», 1977, էջ 210:

նեաց շարականներու աւանդական երգերու եղանակներուն, մինչ եթէ ուզէր՝ կրնար նոյն դրութեամբ նորեր յօրինել, ինչպէս ըրած է իր տաղերուն»,- գրում է Հ. Տայեանը[9]: Եւ պատահական չէ, որ իր հեղինակած շարականներից 11-ի դիմաց նշւում են Շնորհալու շարականների եղանակները: Տաղերում եւս «Շնորհալւոյ հետեւող մ'է, որուն «Յիսուս որդի» քերթուածը մանուկ հասակէն բերան ուսած էր»[10]: Ուստի կարելի է նշել, որ Մ. Սեբաստացու երաժշտական ոճը ձեւաւորուել է Ն. Շնորհալու ազդեցութեան ներքոյ: Իր ստեղծագործութիւններն արդիւնք են կրօնական ներշնչման, նախատեսուել են պաշտօներգութեան մէջ ներմուծուելու, ինչպէս նաեւ մանկավարժական նկատառումներով: Պատահական չէ, որ իր երգերն անձամբ էր սովորեցնում աշակերտներին. «...եւ երբեմն փոքրկանցն իսկ հրամայել ի սեղանի անդ զհոգեւոր երգս ասել, մանաւանդ զերգս, զորս ինքն էր յօրինեալ լի հոգեւոր խրատուք կամ գովեստիւք երանուհւոյ Կուսին, համեստ քաղցր եղանակօք: Եւ ստէպ ստէպ ասէր երգել, իբր զի մի բան դատարկ ի մէջ նոցա անկեալ՝ երկարեսցի»[11]:

Անդրադառնալով Մ. Սեբաստացու տաղերին՝ հարկ է նշել, որ նրանցում ամփոփուած է Աբբահօր տառապալից կեանքը, որի իւրաքանչիւր դրուագ ընդելուզուած է առ Աստուած խոր պաշտամունքով ու հպատակութեամբ, առ Տիրամայրը տածած որդիական սիրով: Տաղարանում ընդգրկուած 24 տաղերն ու քերթուածքները աստուածաբանական խորհրդածութիւններ են, Ս. Գրքի այլաբանական պատկերներ, ի խորոց սրտի խոնարհ մրմունջներ, խոստովանութիւն եւ հառաչանքի երկնամբարձ թռիչք: Առաւել քան խօսուն է խորագիրը՝ «Տաղարան որ հետեւի զկնի քրիստոնէական վարդապետութեան, ի զուարճութիւն մանկանց՝ ուսանողաց զքրիստոնէական վարդապետութիւն»: Իսկ իբրեւ երկրորդական խորագիր՝ գրուած է. «Երգք եւ տաղք զանազանք ասացեալք ի Մխիթարայ Վարդապետէ Սեբաստացւոյ՝ ի զանազան ժամանակս, ի փառս Աստուծոյ եւ ի պատիւ սրբոց նորա»[12]:

Մ. Սեբաստացին՝ իբրեւ երաժիշտ եւ երգահան, նուազ ազդեցիկ չէ, քան Շնորհալին. նկատի ունենք սրտաբուխ, լուսապարար զեղումների ու վսեմ մտքերի խորապէս մարդկային ու ներդաշնակ նրա արուեստը: Ի վերջոյ, կարելի է նշել նաեւ ստեղծագործութիւններ, որոնք, ներշնչուած լինելով նախորդ դարերի առանձին վառ կոթողներից, Մ. Սեբաստացու գրչով նոր կեանք են ստացել: Այդպիսին է «Ամէնօրհնեալ սո՛ւրբ կոյս, գթա» տաղը, որն առանձնանում է ոչ միայն իր գեղարուեստական բարձր արժանիքներով, այլեւ հնագոյն աւանդոյթների ու նորագոյն ճաշակի բնական համադրութեամբ: Քերթուածքը 1500 տող է, եւ երկրորդ տողերի սկզբնատառերն ամբողջացնում են «Մինչ կոյր էի՝ ուխտեցի, Զի ի Կուսէդ լոյս տացի» նախադասութիւնը: Իրար յաջորդող տողերում գործածւում են այնպիսի բառեր, որոնք եթէ հանուեն, ստեղծագործութեան իմաստը չի խաթարուի, իսկ եթէ այդ բառերը կողք կողքի դրուեն, ապա աղօթք կը դառնան, ինչպէս «Հայր մեր»-ը: Ամենայաճախ գործածուող բառը, որին հեղինակը ձգտում է ողջ էութեամբ եւ մեկնաբանում տարբնոյթ դարձուածներով, լոյսն է: Լուսերգութեան աւանդները հասել են դեռեւս միջնադարեան արեւագալի երգերից: Առարկայական լոյսի մեծարումը նախնական քայլ է՝ հասնելու հոգեւոր լոյսի գոյութեան գաղափարին, լոյսի՝ իբրեւ խաւարն ակօսող եւ յոյսը հաստատող հզօր ճառագայթի: Պատահական չէ, որ ստեղծագործութիւնը կոչ-

9 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 19:

10 Հ. Յովհ. Թորոսեան, նշ. աշխ., էջ 340:

11 Հ. Ստ. Ագոնց, նշ. աշխ., էջ 426:

12 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 21:

ւում է «Երգաբանութիւն առ ամէնօրհնեալ կոյս Մարիամ» (ընդծումը մերն է - Գ. Մ): Յատկանշական է, որ «տաղերուն նման երգելիք ոտանաւորներ գրած է Մխիթար Աբբահայր», որոնք սկսւում են երգ բառով եւ ամփոփուած են տաղարանում. «Երգ առ ամենասուրբ Երրորդութիւն...», «Երգ խրատական...», «Երգ պաղատանաց...», «Երգ աղերսանաց...», «Երգ եւ գովեստ սրբոյն Գրիգորի...», «Երգ դրուատական...», «Երգ գովասանաց...», «Երգ ի վերայ վնասուց մեղաց...», «Երգ գորովագթական եւ դրուատական...»[13] եւ այլն: Ակնառու է, որ ստեղծագործութիւնները գրուած են միջնադարեան երգ տեսակին բնորոշ եղանակի համաչափ ծաւալումով եւ որոշակի աղերսներ ունեն Շնորհալու երգերի հետ: Երգ-ը հայ հոգեւոր երաժշտութեան ինքնատիպ դրսեւորումներից է, որ սերուելով շարականներից՝ ունի նաեւ որոշակի առանձնայատկութիւններ՝ հինգ կամ ութվանկանի տողեր, ելեւէջի սահուն երգայնութիւն, համաչափ ռիթմ եւ կառուցուածքի դասական պարզութիւն[14]: Անշուշտ, չենք կարող պնդել, որ դրանք զուտ մաքուր երգ ժանրին պատկանող ստեղծագործութիւններ են, բայց, ըստ էութեան, ընդհանուր բնոյթով նմանութիւններն ակնառու են: Բացի այդ, հարկ է նշել նաեւ երգ-ի ոչ միայն կառուցուածքային բազմազանութիւնը, այլեւ գրական ստեղծագործութեան ու եղանակաւորման տարաբնոյթ համադրութիւնները՝ համեմուած միջնադարեան նրբարուեստ հնարանքներով: Յաւօք, Մ. Սեբաստացու տաղերի մեծ մասի եղանակներն այսօր մեզ հասանելի չեն եւ այդպէս էլ «թաղուած կը մնան անցեալ դարերու լռութան մէջ»[15]: Սակայն թէ՛ շարականների, թէ՛ տաղերի, թէ՛ «երգելիք ոտանաւորների» կապակցութեամբ Յովհ. Թորոսեանը որոշակի վկայում է, որ այդ «տխրանոյշ եղանակներէն մի քանին մինչեւ այսօր կը պահուին աւանդաբար մեր մէջ» եւ «...զորս կ'երգէինք վանքին մէջ մինչեւ վերջին տարիներս»[16]:

Եւ այսօր ամենայն իրաւամբ կարող ենք ասել, որ Մ. Սեբաստացու ջանքերով ծագել, զարգացել ու յարատեւում է հայ հոգեւոր եկեղեցական պաշտօներգութեան վենետիկեան դպրոցը:

13 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 22-23:

14 Ս. Մելիքեան, *Ուրուագիծ հայ երաժշտութեան պատմութեան*, Երեւան, 1935, էջ 16, 32, 35:

15 Հ. Ղ. Տայեան, նշ. աշխ., էջ 26:

16 Հ. Յովհ. Թորոսեան, նշ.աշխ., էջ 339-340: